Վ. Ս. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՈՒ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻՋԵՎ ԷԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ ՍՍՀՄ-ՈՒՄ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից հետո սովետական ժողովուրդը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ պատմական կարճ ժամանակամիջոցում հաղթահարելով երկրի դարավոր հետամնացությունը, հերոսական էջեր է գրել իր կեսդարյա կյանքի տարեգրության մեջ։ Սովետական իշխանության տարիներին արմատական փոխոխություններ են տեղի ունեցել ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում։ Հիմնովին փոխվել է նաև մտավոր ու ֆիզիկական աշխատանքի տեղն ու դերը մարդկանց հասարակական գործունեության սիստեմում, վերացել է նրանց հակադրությունը, լուրջ քայլեր են արվում նրանց միջև էական տարբերությունների վերացման ուղղությամբ։

Մտավոր ու ֆիզիկական աշխատանքի միջև հակադրության և էական տարբերությունների վերացման խնդիրը սերտորեն կապված է ողջ հասարակական կյանքի հեղափոխական վերակառուցման հետ, երկրում սոցիալիզմի ու կոմունիզմի հաղթանակի հետ։ Մարդկանց գործունեության այդպիսի փոփոխման մեծ դժվարությունը պայմանավորված է այն բանով, որ մտավոր ու ֆիզիկական աշխատանքի միջև էական տարբերությունների և հակադրության առաջացումը՝ որպես արտադրողական ուժերի հետագա զարգացման շնորհիվ աշխատանքի հասարակական բաժանման անխուսափելի հետևանք, պատմականորեն համընկնելով արտադրության միջոցների ու գործիքների մասնավոր սեփականության ծագման հետ, հազարամյակների ընթացքում խոր հետքեր է թողել հասարակական կյանքի բոլոր բնագավառներում։

Հասարակական զարգացման պրոցեսում ստացվել էր այնպես, որ ֆիզիկական աշխատանքով զբաղվում էին աշխատավոր մասսաները։ Նրանց արտադրական գործունեությունն անմիջականորեն ուղղվում էր բնության իրերի ու առարկաների նպատակահարմար փոփոխմանը, այսինքն՝ նյութական բարիքների արտադրությանը։ Մինչդեռ մտավոր գործունեության անմիջական նպատակը պետության և արտադրության ղեկավարումն էր։ Հասկանալի է, որ շահագործող դասակարգերը գերադասում էին մտավոր աշխատանքը, այն համարում մաքուր ու ազնիվ գործունեություն։

Մտավոր ու ֆիզիկական աշխատանքի միջև էական տարբերությունների առաջացումը համընկնելով դասակարգերի ծագման հետ, սկզբից ևեթ դասակարգային բնույթ է ստացել, արտահայտել հակամարտ շահեր, ունեցել անտագոնիստական բովանդակություն։ Շահագործման պայմաններում աշխատանքը չի հրապուրել մարդկանց, չի դարձել կենսական պահանջ, եղել է ծանր պարտականություն։ Աշխատավոր մասսաները ոչ ժամանակ, ոչ էլ հնարավորություն են ունեցել բարձրացնելու իրենց կուլտուրական մակարդակը, զբաղվելու մտավոր գործունեությամբ։ Աշխատավոր մասսաների մտավոր զարգացմանը արգելակել են հենց իրենք, շահագործող դասակարգերը, որովհետև բոլոր այն դեպքերում, երբ աշխատանքն անհրաժեշտաբար չի պահանջել մտավոր ունակությունների կիրառում, նրանք գիտակցաբար աշխատավոր մասսաներին պահել են խավարի ու տգիտության մեջ, դրանով իսկ դյուրին դարձնելով շահագործումը։ Այդ հանդամանքը աշխատավոր մասսաների մոտ, նրանց կյանքի դառը փորձով ստեղծել է համոզմունք, որ մտավոր աշխատանքով զբաղվողները նույնպես շահագործում են իրենց աշխատանքը։

Արտադրողական ուժերի զարգացմանը զուգընթաց հասարակական աշխատանքի մեջ փոխվել է մտավոր գործունեության ծավալը, մեծացել նրա դերը։ Արտադրության պլանավորումն ու կառավարումը, տեխնոլոգիական պրոցեսների մշակումն ու հիմնավորումը, անհրաժեշտ կադրերի պատրաստումը, արտադրության պահանջներին համապատասխան նրանց հանրակրթական ու կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացումը, վերջապես, հետզհետե ծավալուն դարձող պետական ղեկավարության իրականացումը-այս ամենը անհրաժեշտաբար պահանջում

էին մտավոր գործունեության ծավալում, մտավոր աշխատանքով զբաղվողների թվի հետզհետև ավելացում։

Չնայած մտավոր ու ֆիզիկական աշխատանքը հավասարապես շահագործվում է կապիտալի կողմից, այս առումով էլ որոշ չափով, որոշ բնագավառներում նրանց միջև հակադրությունը մեղմանում է, այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ, մտավոր ու ֆիզիկական աշխատանքի միջև հակադրությունը ավելի է խորանում, ընդունելով նորանոր ձևեր։ Կապիտալիստական հասարակության մեջ առաջ է գալիս մտավորականության մի ստվար զանգված, որը սպասարկում է կապիտալիստական արտադրությանն ու պետական ղեկավարությանը։ Անկասկած, մտավորականությունը միատարր չէ. մտավոր գործունեությամբ զբաղվող մարդկանց բոլոր խմբերը հավասար չափով ու միևնույն ձևով չեն օգտվում հասարակական հարստությունից։ Բայց բուրժուազիան իր դասակարգային շահերից ու նպատակներից ելնելով՝ ստեղծում է մտավորականության որոշակի արտոնյալ խավեր, որոնք ակտիվորեն մասնակցում են աշխատավորների շահագործմանը և օգտվում այդ շահագործման բարիքներից։

Աշխատանքի շահագործման պայմաններում հասարակության արտադրողական ուժերի զարգացումն ու տեխնիկական առաջադիմությունը ոչ միայն չեն նվազեցնում մտավոր ու ֆիզիկական աշխատանքի էական տարբերությունները, այլ ընդհակառակը, ավելի են խորացնում դրանք։ Կապիտալիզմի ժամանակ մտավոր ու ֆիզիկական աշխատանքի հակադրությունը հասնում է իր գագաթնակետին։ Դրանով իսկ օբյեկտիվ պայմաններ են ստեղծվում հակադրության հաղթահարման համար։ Մասնավոր սեփականության պայմաններում ևս արտադրողական ուժերի զարգացման և տեխնիկական առաջադիմության ղուգընթաց հասարակական արտադրության պահանջով այս կամ այն չափով բարձրանում է ֆիզիկական աշխատանքով զբաղվող մարդկանց կուլտուր-տեխնիկական մակարդակը։ Սակայն դա մտավոր ու ֆիզիկական աշխատանքի էական տարբերությունների վերացում չէ։ Անտագոնիզմի պայմաններում այդպիսի նպատակ չի դրվում։ Բայց հասարակական կյանքի զարգացման ընթացքը օբյեկտիվորեն տանում է դեպի մտավոր ու ֆիզիկական աշխատանքի հակադրության վերացում։ Աշխատավոր մասսաների տեխնիկական դրագիտության բարձրացումը, որն անհրաժեշտաբար պահանջում է ժամանակակից ինդուստրիան, արդեն իսկ առաջընթաց քայլ է այդ հակադրության հաղթահարման ճանապարհին։

Այսպիսով, կապիտալիզմի ժամանակ եթե, մի կողմից, հասարակական կյանքի մյուս հակասությունների հետ միասին ծայրաստիճան սրվում է նաև մտավոր ու ֆիզիկական աշխատանքի հակադրությունը, ապա, մյուս կողմից, անհրաժեշտ օբյեկտիվ պայմաններ են ստեղծվում հակադրության վերացման համար. բարձրանում է ֆիզիկական աշխատանքով զբաղված մարդկանց կուլտուր-տեխնիկական մակարդակը և, բացի դրանից, կապիտալի իշխանության դեմ հանդես են գալիս ոչ միայն բանվորները ու գյուղացիները, այլև տնտեսական ու պետական ապարատում ծառայողների հոծ զանգվածները և ավելի ու ավելի ստվար դարձող մտավորականությունը։

Սակայն մասնավոր սեփականության, մարդու կողմից մարդու շահագործման պայմաններում, մտավոր ու ֆիզիկական աշխատանքի հակադրության և առավել ևս էական տարբերությունների վերացման մասին ոչ մի խոսք չի կարող լինել։ Այդ հարցն առաջին անգամ դրվել է մարքս-լենինյան տեսության կողմից։ Մարքսիզմ-լենինիզմը մտավոր ու ֆիզիկական աշխատանքի միջև հակադրության հաղթահարման խնդիրն անմիջականորեն կապում է սոցիալիստական հեղափոխության հաղթանակի հետ, մասնավոր սեփականության և մարդու կողմից մարդու շահագործման վերացման հետ։ Բայց հակադրության վերացումը դեռևս էական տարբերությունների ու հակասությունների վերացում չէ։ Հակադրությունը վերանում է, ասում է Վ. Ի. Լենինը, հակասությունը մնում։ Ահա թե ինչու Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից հետո մտավոր ու ֆիզիկական աշխատանքի էական տարբերությունների վերացումը դիտվել է որպես մեր երկրում կոմունիստական շինարարության հիմնական խնդիրներից մեկը։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո սովետական իշխանությունը ցարական Ռուսաստանից ժառանգեց կիսավեր, հետամնաց ագրարային մի երկիր, որտեղ բնակչության գերակշռող մասը կազմում էր գյուղացիությունը։ Սովետական իշխանության հենց առաջին օրերից սկսած կոմունիստական կուսակցությունը միջոցառումներ ձեռնարկեց հաղթահարելու մեր երկրի տնտեսական ու կուլտուրական հետամնացությունը և ստեղծելու անհրաժեշտ նյութատեխնիկական բազա սոցիալիզմի հաղթանակի համար. ինդուստրացնելու արդյունա-

բերությունը, գյուղատնտեսությունն ու տրանսպորտը, իրականացնելու կուլտուրական հեղափոխություն։ Այսօր, երբ մեր հերոսական բազմազգ ժողովուրդը նշում է մեծ Հոկտեմբերի փառապանծ 50-ամյակը, կարող ենք ասել, որ երկրի հեղափոխական վերակառուցման, արտադրության ինդուստրացման, ողջ երկրի էլեկտրիֆիկացման և կուլտուրական հեղափոխության մասին լենինյան պատգամները մարմնավորվում են կյանքում։ Սովետական իշխանության տարիներին, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, մեր երկիրը դարձել է հզոր ինդուստրիալ տերություն։ Եթե 1913 թ. մեր երկրում արտադրվել է ընդամենը 1,9 միլիարդ կիլովատ ժամ էլեկտրաէներգիա, ապա 1966 թ. էլեկտրաէներգիայի արտադրությունը հասավ 545 միլիարդ կիլովատ ժամի։ Ռուսաստանի էլեկտրիֆիկացման լենինյան պլանի համաձայն, 10—15 տարվա ընթացքում նախատեսվում էր շահագործման հանձնել 1,5 միլիոն կիլովատ հզորության էլեկտրակայաններ։ Մինչդեռ, միայն 1966 թ. շարք են մտել մոտ 10 միլիոն կիլովատ հզորության էլեկտրակայաններ։ 1913 թ. համեմատությամբ, 1966 թ. մեր երկրի արդյունաբերության արտադրանքն ավելացել է 66 անգամ, այդ թվում մեքենաշինությունն ու մետաղամշակությունը՝ 538 անգամ, քիմիական արդյունաբերությունը՝ 294 անգամ և այլն։ Արդյունաբերական արտադրանքի աճը 1929—1966 թթ. եթե ԱՄՆ-ում կազմել է 4 տոկոս, Անգլիայում ու Ֆրանսիայում 2,5 տոկոս, ապա ՍՍՀՄ-ում այն կազմել է 11,1 տոկոսի։ Սովետական իշխանության տարիներին կառուցվել և գործարկվել են 40 հազար խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ։ Նոր հնգամյակի միայն առաջին տարում՝ 1966 թ. ընթացքում կառուցվել ու շահագործման են հանձնվել 400 նոր արտադրական ձեռնարկություններ, յուրացվել են ավելի քան 300 տեսակի նոր մեքենաներ ու նյութեր, շահագործման հանձնվել 350 ավտոմատ ու կիսաավտոմատ նոր գծեր և այլն։ Միայն Սովետական Հայաստանում յոթնամյակի տարիներին կառուցվել ու գործարկվել են ավելի քան 300 արդյունաբերական նոր ձեռնարկություններ ու արտադրամասեր։ Մեր հանրապետության ժողովրդական տնտեսության գիտա-տեխնիկական զարգացման բարձր մակարդակի մասին է խոսում թեկուզ այն փաստը, որ այժմ Սովետական Հայաստանը աշխարհի 73 երկրներ է արտահանում 150 զանազան արդյունաբերական ապրանքներ։

Երկրի արդյունաբերության ինդուստրիալ զարգացումը մեծ հնարավորություններ է ստեղծել գյուղատնտեսության արմատական վերափոխման համար։ 1928 թ. մեր գյուղատնտեսության մեջ կար ընդամենը 27 հազար տրակտոր, 700 ավտոմեքենա և երկու կոմբայն։ Մինչդեռ միայն ընթացիկ տարում ժողովրդական տնտեսությունը կստանա 407 հազար տրակտոր, 731 հազար ավտոմեքենա, 102 հազար հատիկահավաք կոմբայն։ 1966 թ. արդեն մեր երկրի գյուղատնտեսությանը սպասարկում էին 1.700 հազար տրակտոր, 540 հազար հատիկահավաք կոմբայն, 1.013 հազար ավտոմեքենա և բազմաթիվ այլ գյուղատնտեսական մեքենաներ։ Գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացումը հնարավորություն տվեց 1966 թ. գյուղատնտեսական մթերքների արտադրությունը 1913 թ. համեմատությամբ ավելացնել գրեթե 3,5 անգամ։

Հենվելով տնտեսական նվաճումների վրա, սովետական ժողովուրդը, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, իրականացրեց երկրի կուլտուրական հեղափոխության լենինյան պլանը. խավարի ու տգիտության ցարական Ռուսաստանը և էլ ավելի հետամնաց նրա ազգային ծայրամասերը պատվեցին դպրոցների, գրադարանների, ակումբների և կուլտուրլուսավորական այլ հաստատությունների լայն ցանցով։ 1913 թ. երկրի տարրական ու միջնակարգ հանրակրթական դպրոցներում կային ընդամենը 7,9 միլիոն աշակերտներ, իսկ բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ 127 հազար ուսանողներ։ Մինչդեռ 1966—1967 ուս. տարում երկրի ուսումնական հաստատություններում սովորում էին 72.568 հազար մարդ, որից ավելի քան 8 միլիոնը՝ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում։ Եթե 1939 թ. մեր երկրում բարձրագույն և միջնակարգ (լրիվ ու թերի) կրթություն ունեին 15,9 միլիոն մարդ, կամ բնակչության ընդամենը 8 տոկոսը, ապա ընթացիկ տարվա սկզբին բարձրագույն և միջնակարգ կրթություն ունեցողների թիվը հասավ 84,5 միլիոնի, որը կազմում է աշխատող բնակչության 56,4 տոկոսը։

Թե ինչպիսի արմատական փոփոխություններ են տեղի ունեցել սովետական ժողովրդի կուլտուրական կյանքում, ցայտուն կերպով երևում է նաև մեր հանրապետության օրինակով։

---

1 Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50 տարին» ՍՄԿԿ Կենտրոնական Կոմիտեի թեզիսները, Երևան, 1967, էջ 42։

1914—1915 ուս. տարում Հայաստանի հանրակրթական դպրոցներում սովորում էին 35 հազար աշակերտներ, իսկ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ ընդամենը 100 մարդ։ Մինչդեռ Սովետական Հայաստանի ավելի քան 1600 մասսայական դպրոցներում 1966—1967 ուս. տարում կային 553 հազար աշակերտներ, իսկ 53 տեխնիկումներում ու ուսումնարաններում՝ 36 հազար ուսանողներ։ Նախասովետական Հայաստանը չուներ ոչ մի բարձրագույն դպրոց։ Իսկ այժմ մեր հանրապետությունն ունի 12 բարձրագույն ուսումնական հաստատություն, որտեղ 124 պրոֆեսիաների ու մասնագիտությունների գծով սովորում են 43,3 հազար մարդ։ Եթե ցարական Ռուսաստանի յուրաքանչյուր 10 հազար բնակչից միայն 8 հոգի էին սովորում բարձրագույն ուսումնական հաստատություններում, ապա մեր հանրապետության մեջ յուրաքանչյուր 1000 բնակչից 28-ը սովորում են բարձրագույն ուսումնական հաստատություններում։

Այս ամենը պերճախոս վկայում են մեր երկրում սովետական իշխանության տարիներին տեղի ունեցած հիրավի արմատական, մինչ այդ չտեսնված փոփոխությունների մասին։ Այլ է հիմա մեր երկրի սոցիալական կառուցվածքը. վաղուց պատմության գիրկն են անցել դասակարգային հակամարտություններն ու մարդու կողմից մարդու շահագործումը։ Այլ են հիմա մեր բազմամիլիոն բանվոր դասակարգն ու աշխատավոր գյուղացիությունը, այլ է սովետական մտավորականությունը։ Եթե 1913 թ. երկրի բնակչության միայն 17 տոկոսն էին կազմում բանվորներն ու ծառայողները, ապա այժմ բնակչության 76,4 տոկոսը բանվորներ ու ծառայողներ են։ Մեր երկրի բանվոր դասակարգն այժմ իր շարքերում ունի մոտ 80 միլիոն մարդ, որոնց մոտ 50 տոկոսն ունի լրիվ ու թերի միջնակարգ կրթություն։

Սոցիալիզմի հաղթանակը մեր երկրում արմատապես փոխեց նաև գյուղի դեմքը։ Սովխոզների ու կոլտնտեսությունների ստեղծումը, գյուղատնտեսության հարաճուն մեքենայացումն ու քիմիացումը այլ են դարձրել հողի աշխատավորներին։ Բարձրացել է նրանց հանրակրթական ու կուլտուր-տեխնիկական մակարդակը, գյուղատնտեսական աշխատանքը զգալիորեն մոտեցել է ինդուստրիալ աշխատանքին։

Մեր երկրի սոցիալական կառուցվածքի մեջ տեղի ունեցած արմատական փոփոխությունների մասին է խոսում նաև այն փաստը, որ պատմական կարճ ժամանակամիջոցում ձևավորվեց նոր, սովետական մտավորականության բազմամիլիոն բանակը, որն ակտիվորեն մասնակցում է կոմունիստական շինարարության վեհ գործին։ Եթե 1913 թ. երկրի տնտեսության մեջ զբաղված էին բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությամբ միայն 200 հազար մասնագետներ, ապա 1966 թ. արդեն նրանց թիվը հասավ մոտ 13 միլիոնի։ 1926 թ., երբ սովետական ժողովուրդն արդեն ավարտել էր տնտեսության վերականգնումը, Սովետական Միությունում մտավոր աշխատանքով զբաղված էին 2,5 միլիոնից քիչ ավելի մարդիկ։ Մինչդեռ այժմ մտավոր աշխատանքով զբաղվածների թիվը գերազանցում է 27 միլիոն մարդուց։ 1966 թ. տվյալներով, մեր երկրի գիտական հիմնարկներում, բարձրագույն ուսումնական հաստատություններում և այլ կազմակերպություններում գիտական աշխատանքով զբաղվողների թիվը հասել էր 711,6 հազար մարդու, որը կազմում է աշխարհի բոլոր երկրներում գիտական աշխատանքով զբաղվածների մեկ քառորդը։

Վերոհիշյալ լուրջ տեղաշարժերը, ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի արագ տեմպերով զարգացումը, արտադրության գիտատեխնիկական առաջընթացը արմատական փոփոխություններ են առաջ բերել նաև մտավոր ու ֆիզիկական աշխատանքի փոխհարաբերության մեջ։ Այլ են հիմա ժողովրդական տնտեսության մեջ նրանց տեսակարար կշիռն ու դերը։ Ոչ միայն վաղուց վերացվել է նրանց հակադրությունը, և աշխատանքը դարձել է պատվի գործ ու կենսական անհրաժեշտություն, այլև լուրջ առաջընթաց քայլ է կատարվել նրանց միջև էական տարբերությունների վերացման ճանապարհին։

Չնայած այդ փոփոխություններին, այնուամենայնիվ, մտավոր ու ֆիզիկական աշխատանքի միջև էական տարբերությունները մեր երկրում դեռևս չեն վերացվել։ Պատմական անհրաժեշտության ուժով դրանք դեռ երկար ժամանակ կպահպանվեն, որպես աշխատանքի հասարակական բաժանման անխուսափելի հետևանքներ։ Կոմունիստական շինարարության արմատական խնդիրներից մեկն էլ մտավոր ու ֆիզիկական աշխատանքի էական տարբերությունների հետզհետե վերացումն է, որը կիրականանա ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի հարաճուն ու բարձր տեմպերով զարգացման, արտադրության մեջ գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումների արմատավորման և, մյուս կողմից, կոմունիզմ կառուցող մարդկանց համակողմանի ու ներդաշնակ զարգացման միջոցով։

Սովետական ժողովուրդն իրականացնելով 1966—1970 թթ. հնգամյա պլանի պատմական խնդիրները, նոր առաջընթաց քայլեր կկատարի մեր երկրում կոմունիստական հասարակության կառուցման ճանապարհին։ Արմատական տեղաշարժեր են տեղի ունենում նաև մտավոր ու ֆիզիկական աշխատանքի էական տարբերությունների վերացման ուղղությամբ։ Բայց այդ պրոբլեմը դեռ հեռու է իր վերջնական լուծումից։ Ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում մտավոր ու ֆիզիկական աշխատանքի էական տարբերություններն ակնհայտ են։ Մտավոր ու ֆիզիկական աշխատանքը տարբերվում է ոչ միայն իր ձևերով, այլև բովանդակությամբ. տարբեր են աշխատանքի պայմանները, աշխատանքի բնույթը, աշխատանքի դիմաց վարձատրության ձևերն ու չափերը, աշխատողների հանրակրթական ու կուլտուր-տեխնիկական մակարդակը։ Բացի դրանից, ժողովրդական տնտեսության մեջ ֆիզիկական աշխատանքի տեսակարար կշիռը դեռ շատ մեծ է. ֆիզիկական աշխատանքով զբաղվում է երկրի բնակչության ավելի քան 70 տոկոսը։

Մեր երկրի զարգացման ներկա էտապում մտավոր ու ֆիզիկական աշխատանքի միջև էական տարբերությունների գոյության պատճառներից մեկն էլ կայանում է նրանում, որ ժողովրդական տնտեսության մեջ դեռևս մեծ է ցածր որակավորման աշխատանքների ծավալը։ Կոմունիստական կուսակցության XXIII համագումարում ընկ. Լ. Ի. Բրեժնևը նշեց, որ մեզ մոտ, թեև շատ բան է արվում արտադրության կոմպլեքսային մեքենայացման ու ավտոմատացման ուղղությամբ, այնուամենայնիվ դեռ մեծ է հիմնական և օժանդակ աշխատանքների մեքենայացման մակարդակների միջև խզումը։ Ընդհանուր առմամբ մեր ձեռնարկությունները լավ են զինված նորագույն տեխնիկայով, բայց դեռ օժանդակ աշխատատար շատ պրոցեսներում ձեռքի աշխատանքի տեսակարար կշիռը դանդաղ է կրճատվում։ Ահա թե ինչու կուսակցության համագումարն անհրաժեշտ գտավ լուրջ ուշադրություն դարձնել ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում հիմնական և օժանդակ աշխատանքների կոմպլեքսային մեքենայացման ու ավտոմատացման վրա այն հաշվով, որպեսզի ցածր որակավորման և ցածր վարձատրվող աշխատանքները հետզհետե փոխարինվեն բարձր որակավորման աշխատանքներով, իսկ աշխատավարձի նվազագույն չափը հասցվի 60 ռուբլու։ Արտադրողական ուժերի բարձր զարգացման պայմաններում, բոլոր աշխատավորների հանրակրթական և անհրաժեշտ կուլտուր-տեխնիկական գրագիտության պայմաններում, ժողովրդական տնտեսության մեջ ցածր որակավորման ֆիզիկական աշխատանքը, անկասկած, աստիճանաբար կվերացվի։ Ամեն մի աշխատանք այս կամ այն չափով ինտելեկտուալ բովանդակություն կստանա։ Պարզ է, թե ինչպիսի հսկայական ջանքեր ու միջոցներ են պահանջվում մտավոր ու ֆիզիկական աշխատանքի էական տարբերությունների վերացման մասին կոմունիստական կուսակցության առաջ քաշած պատմական խնդիրները կենսագործելու համար։

Սխալ կլիներ կարծել, թե մտավոր ու ֆիզիկական աշխատանքի էական տարբերությունների վերացման համար բավական է, որ ֆիզիկական աշխատանքով զբաղվող մարդկանց հանրակրթական ու կուլտուր-տեխնիկական մակարդակը հասցնենք ինժեներա-տեխնիկական աշխատողների մակարդակին։ Դա, անկասկած, նպաստավոր հող է ստեղծում մտավոր ու ֆիզիկական աշխատանքի էական տարբերությունների վերացման համար, դառնում այդ նպատակին ուղղված կարևորագույն միջոցառումներից մեկը։ Սակայն աշխատողների հանրակրթական ու կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացումն, ինքնըստինքյան, դեռևս չի վերացնում մտավոր ու ֆիզիկական աշխատանքի էական տարբերությունները։ Աշխատավորների կուլտուր-տեխնիկական գրագիտության բարձրացումը միշտ էլ անմիջականորեն պայմանավորված է արտադրության պահանջներով։

Մտավոր ու ֆիզիկական աշխատանքի էական տարբերությունների վերացման հիմնական ուղին արտադրության այնպիսի զարգացումն ու կատարելագործումն է, որի շնորհիվ ֆիզիկական աշխատանքը ինտելեկտուալ բովանդակություն է ստանում, այսինքն՝ ֆիզիկական աշխատանքը դառնում է այնպիսին, որի կատարման համար պահանջվում են որոշակի հանրակրթական ու կուլտուր-տեխնիկական գիտելիքներ ունեցող աշխատողներ։ Ուրեմն, մտավոր ու ֆիզիկական աշխատանքի էական տարբերությունների վերացման անհրաժեշտ պայմանը, ամենից առաջ, երկրի արտադրողական ուժերի հետագա զարգացումը և այնպիսի տեխնիկական առաջընթացն է, որոնք հնարավորություն տային աշխատատար պրոցեսների առավել մեքենայացման ու ավտոմատացման միջոցով հետզհետե կրճատել մարդու անմիջական մասնակցության ծավալն արտադրական պրոցեսներին, ստեղծել անհրաժեշտ նյութատեխնիկական բազա, ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներն ու ճյուղերը հագեցնել բարձր արտադրողա-

կանության մեքենաներով ու սարքավորումներով։ Մեր երկրի ժողովրդական տնտեսության զարգացման պատմությունը պերճախոս վկայում է հենց այդ մասին։

ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարդացման նոր հնգամյա պլանի կենսագործումը կարևոր փուլ կհանդիսանա կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման, դեպի կոմունիզմ մեր առաջընթացի ճանապարհին։ ՍՄԿԿ XXIII համագումարը մատնանշեց, որ հնգամյա պլանի տնտեսական գլխավոր խնդիրն է. «Գիտության ու տեխնիկայի նվաճումների ըստ ամենայնի օգտագործման, հանրային ամբողջ արտադրության ինդուստրիալ զարգացման, նրա արդյունավետության և աշխատանքի արտադրողականության բարձրացման հիման վրա, ապահովել արդյունաբերության հետագա զգալի աճ, գյուղատնտեսության զարգացման արագ, կայուն տեմպեր և դրա հիման վրա էապես բարձրացնել ժողովրդի կյանքի նյութական ու կուլտուրական մակարդակը»[2]։ Նոր հնգամյակի տարիներին ժողովրդական տնտեսությունը կստանա բարձր արտադրողականության բազմաթիվ նոր մեքենաներ ու սարքավորումներ։ ՍՍՀՄ-ի գյուղատնտեսությունը կստանա 1.790 հազար տրակտոր, 1.100 հազար բեռնատար ավտոմեքենա, 550 հազար հատիկահավաք կոմբայն և այլն. կամ, այլ կերպ ասած, երկրի գյուղատնտեսության՝ մեքենաներով զինվածությունը կաճի ավելի քան երկու անգամ։

Արտադրության մեքենայացման հիմնական չափանիշը վերջին հաշվով աշխատանքի էներգազինվածությունն ու էլեկտրազինվածությունն է։ Եթե 1913 թ. համեմատությամբ 1940 թ. աշխատանքի էներգազինվածությունը յուրաքանչյուր բանվորի հաշվով ավելացել է ընդամենը 5 անգամ, իսկ էլեկտրազինվածությունը 8 անգամ, ապա 1966 թ. յուրաքանչյուր բանվորի հաշվով աշխատանքի էներգազինվածությունն աճել է 21 անգամ, իսկ էլեկտրազինվածությունը՝ 34 անգամ։ Արտադրության մեքենայացման ու ավտոմատացման շնորհիվ անհամեմատ մեծացել է աշխատանքի արտադրողականությունը, որը վերջին հաշվով ամենագլխավորն է նոր հասարակության կառուցման համար։ 1960 թ. համեմատությամբ 1966 թ. արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականությունն աճել է 38 տոկոսով, շինարարության մեջ՝ 47 տոկոսով, երկաթուղային տրանսպորտում՝ 42 տոկոսով։ 1966 թ. երկրի արդյունաբերական արտադրանքի աճի 60 տոկոսը ստացվել է ի հաշիվ աշխատանքի արտադրողականության բարձրացման։

Հնգամյակի տարիներին մեծ չափով կավելանա նաև գյուղատնտեսական աշխատանքների էներգա-էլեկտրազինվածությունը։ Էլեկտրաէներգիայի սպառումը գյուղում 1970 թ. կհասնի 60—65 միլիարդ կիլովատ ժամի, որը 3 անգամ կգերազանցի 1965 թ. մակարդակը և 30 տոկոսով ավելին կլինի, քան 1940 թ. ամբողջ երկրի սպառած էլեկտրաէներգիան։

Արդյունաբերության, շինարարության, գյուղատնտեսության և տրանսպորտի ինդուստրացումը, գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումներով ողջ ժողովրդական տնտեսության զինումը իր հերթին պահանջում է ունենալ տարբեր մասնագիտությունների միլիոնավոր բարձրորակ կադրեր՝ ինժեներներ, տեխնիկներ, կոնստրուկտորներ, մեխանիզատորներ և այլն։ Այլ կերպ ասած, մտավոր ու ֆիզիկական աշխատանքի էական տարբերությունների վերացման մյուս կարևորագույն ուղին արտադրության աճող մեքենայացման ու ավտոմատացման, նորագույն մեքենաների ու սարքավորումների լայն կիրառման զուգընթաց բազմակողմանիորեն զարգացած բարձր որակավորման մասնագետների պատրաստումն է, աշխատավորների կուլտուրական ու տեխնիկական գրագիտության սիստեմատիկ բարձրացումը։ «Աշխատավորների ընդհանուր կուլտուրայի ու տեխնիկական գրագիտության աճը,—նշված է ՍՄԿԿ XXIII համագումարի բանաձևում,—անխզելիորեն կապված է բարձրագույն և միջնակարգ մասնագիտական դպրոցի հետագա զարգացման հետ։ Արդի փուլում դրանց առաջնահերթ խնդիրն է բարձրացնել մասնագետների պատրաստման որակը»[3]։

Կենսագործելով ՍՄԿԿ XXIII համագումարի որոշումները, հնգամյակի ընթացքում հիմնականում կավարտվի երիտասարդների ընդհանուր միջնակարգ կրթության անցնելու գործը։ 1966—1970 թթ. շարք կմտնեն 22 հազար նոր դպրոցներ, անհամեմատ կընդլայնվի բարձրագույն ու միջնակարգ մասնագիտական կրթությունը, բուհերում ուսանողների թիվը կաճի մեկ միլիոն մարդով։ Հնգամյակի միայն առաջին տարում մեր երկրի բարձրագույն ուսումնական հաստատություններն ընդունվեցին մոտ 900 հազար մարդ, իսկ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունները՝ ավելի քան 1.200 հազար մարդ։ Հնգամյակի ընթացքում

---

2 ՍՄԿԿ XXIII համագումարի բանաձևը, Երևան, 1966, էջ 16—17։

3 Նույն տեղում, էջ 22։

մեր երկրի բուհերը, տեխնիկումներն ու ուսումնարանները ժողովրդական տնտեսության կտան բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությամբ 7 միլիոն մասնագետներ։

Թե ինչպիսի արագ տեմպերով է աճում սովետական մտավորականությունը, ինչպես է փոխվում նրա դերը ժողովրդական տնտեսության մեջ և մեծանում նրա տեսակարար կշիռը հասարակության սոցիալական կառուցվածքում, ակնհայտ երևում է նաև մեր հանրապետության օրինակով։ Վերջին քառորդ դարում հանրապետության բնակչության 70 տոկոս աճի դիմաց ժողովրդական տնտեսության մեջ զբաղված աշխատողների թիվն ավելացել է մոտավորապես 4 անգամ։ Այդ նույն ժամանակամիջոցում բարձրագույն կրթություն ունեցող մասնագետների թիվն ավելացել է 8 անգամ, այդ թվում ինժեներներինը՝ 10, գիտական աշխատողներինը և ուսուցիչներինը՝ զրեթե 8, դյուղատնտեսներինը՝ 7, իսկ բժիշկներինը՝ 6 անգամ[4]։ Բավական է ասել, որ եթե 1946 թ. Հայաստանում կար ընդամենը 1270 բժիշկ, ապա այժմ ունենք 6 հազար բժիշկ։ Եթե 1913 թ. Հայաստանում մեկ բժիշկ էր ընկնում 17 հազարից ավելի բնակչին, ապա այժմ հանրապետության մեջ մեկ բժիշկն սպասարկում է ընդամենը 400 բնակչի, այն դեպքում, երբ ԱՄՆ-ում մեկ բժիշկ է ընկնում 800, իսկ Անգլիայում 1200 բնակչին։

Կոմունիստական կուսակցությունն ու սովետական կառավարությունը մեծ ուշադրություն են դարձնում արտադրության համար դեկավար աշխատողների ու մասնագետների պատրաստման վրա։ Եթե 1950 թ. մեր երկրի ժողովրդական տնտեսությունն ստացավ միայն 37 հազար ինժեներ մասնագետներ, ապա 1966 թվականին՝ 179 հազար ինժեներ, այն դեպքում, երբ ԱՄՆ-ում 1966 թ. պատրաստվել է միայն 43 հազար ինժեներ։ Այժմ մեր երկրի ժողովրդական տնտեսության մեջ բարձրագույն կրթությամբ ինժեներների թիվը հասել է 1.789 հազարի, իսկ ԱՄՆ-ում՝ ընդամենը 750 հազարի։

Բացի մասնագիտացված բարձրագույն ու միջնակարգ ուսումնական հաստատություններում սովորողներից, ժողովրդական տնտեսության միլիոնավոր աշխատողներ հանրակրթական ու տեխնիկական գիտելիքներ են ստանում առանց արտադրությունից կտրվելու, հենց արտադրական ձեռնարկություններում գործող տարբեր տիպի դպրոցներում ու որակավորման խմբակներում։ Միայն 1966 թ. ընթացքում անմիջականորեն արտադրության մեջ կազմակերպված դասընթացներում ու խմբակներում նոր մասնագիտություններ են ձեռք բերել և բարձրացրել իրենց որակավորումը 14.338 հազար մարդ։ Տեղին է այստեղ հիշատակել Վ. Ի. Լենինի խոսքերն այն մասին, որ «...չի կարելի պատկերացնել ապագա հասարակության իդեալը առանց ուսուցումը միացնելու երիտասարդ սերնդի արտադրողական աշխատանքի հետ. ո՛չ ուսուցումն ու կրթությունն առանց արտադրողական աշխատանքի, ո՛չ արտադրողական աշխատանքն առանց զուգահեռ ուսուցման ու կրթության չեն կարող դրվել այն բարձրության վրա, որ պահանջում են տեխնիկայի արդի մակարդակը և գիտական իմացության վիճակը...»[5]։ Լենինյան խոսքերն էլ ավելի մեծ նշանակություն ունեն այժմ, երբ արտադրության բոլոր բնագավառներում գիտատեխնիկական հեղափոխությունը վաստ է դառնում։

Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը, հաշվի առնելով այդ հանգամանքը, կարևոր նշանակություն են տալիս երկրի տնտեսական ու հասարակական կյանքի գիտական դեկավարմանը։ Երկրի ժողովրդական տնտեսության կառավարման բնագավառում անցկացվող ռեֆորմը, որի նպատակն է ուժեղացնել դեկավարման տնտեսական մեթոդների դերը, կատարելագործել պետական պլանավորումը, ընդլայնել ձեռնարկությունների տնտեսական ինքնուրույնությունն ու նախաձեռնությունը և արմատավորել ու կատարելագործել տնտհաշվարկը, լուրջ խթան կհանդիսանա աշխատանքի արտադրողականության բարձրացման համար։

Այդ ամենը օրակարգի են դնում մի կարևորագույն հարց ևս, այն է՝ պարբերաբար զբաղվել նաև դեկավար աշխատողների ու մասնագետների տնտեսագիտական ու գիտատեխնիկական գիտելիքների բարձրացման, նրանց մասնագիտական որակավորման հարցերով։ Այդ նպատակն է հետապնդում ՍՍՀՄ Մինիստրների սովետի կողմից վերջերս ընդունված որոշումը «Արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի, կապի և առևտրի դեկավար աշխատողների ու մասնագետների որակավորման բարձրացման սիստեմի կատարելագործման մասին»[6]։ Որոշման մեջ նշված է, որ դեկավար աշխատողների ու մասնագետների որակավորման սիստեմի հիմնական նպատակը պետք է լինի օգնել արտադրության դեկավար աշխատողներին ու մաս-

---

4 Տե՛ս «Լենինյան ուղիով», 1967, № 6, էջ 5։

5 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 2, էջ 602—603։

6 Տե՛ս «Известия», № 160, 9 հուլիսի 1967 թ.։

նաղետներին պարբերաբար ուսումնասիրելու գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումները, պլանավորման ու տնտեսական խթանման, ինչպես և արտադրության ու կառավարման գիտական կազմակերպման էֆեկտիվ մեթոդները, օգտագործելով հաշվողական տեխնիկան, արտադրական պրոցեսների մեքենայացման ու ավտոմատացման մեթոդները։ Ղեկավար աշխատողների ու մասնագետների որակավորման նպատակը պետք է լինի նաև պարբերաբար կատարել գիտատեխնիկական առաջավոր փորձի փոխանակում և ընդհանրացում։ ՍՍՀՄ Մինիստրների սովետի վերոհիշյալ որոշումը նոր ազդակ կհանդիսանա սոցիալիստական արտադրության մեջ իրականացվող գիտատեխնիկական առաջընթացի հարաճուն պահանջմունքներին համապատասխան արտադրության ղեկավար աշխատողների ու մասնագետների որակավորումը բարձրացնելու համար։

Այսպիսով, կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման, արտադրական պրոցեսների կոմպլեքսային մեքենայացման ու ավտոմատացման զուգընթաց, ժողովրդական կրթության հետագա զարգացումը, աշխատավորների ընդհանուր կուլտուրայի և գիտատեխնիկական գրագիտության հարաճուն վերելքը աստիճանաբար տանում են դեպի մտավոր ու ֆիզիկական աշխատանքի էական տարբերությունների վերացում։ Սակայն, սխալ կլիներ կարծել, թե կոմունիստական շինարարության պրոցեսում ընդհանրապես կվերանա պատմական անհրաժեշտությամբ առաջ եկած աշխատանքի հասարակական բաժանումը։ Աշխատանքի մեջ դարձյալ այս կամ այն չափով կտարբերենք մտավորն ու ֆիզիկականը, բայց այդ տարբերություններն էական չեն լինի։ Կոմունիզմի հաղթանակով տեղի կունենա մտավոր ու ֆիզիկական աշխատանքի օրգանական միացում։ Դրանք կդառնան մարդկանց արտադրական գործունեության միմյանց հետ սերտորեն կապված, և միմյանց ներդաշնակվող կողմերը։